ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.04.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ վարչության պետ Հ. Մելիքյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎՎ իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռուստյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿՎ ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ. Հունանյանը,
ՀՀ ՊՆ Կ և ՌԿՎ գլխավոր մասնագետ Վ. Իրիցյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր գրաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **երիտասարդական հանրակացարանի ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակցի՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի, էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ սույն ընթացակարգի հրավերով հաստատված Հավելված N2.1 ով ներկայացված՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալների, որոնք չեն համապատասխանում հարվերի 1 ին մասի 4.3 կետի 8-րդ ենթակետի պահանջներին (բացակայում էին մասնակցի՝ իրական շահառու համարվող ֆիզիկական անձանց մասին տվյալները), ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը **15.04.2019թ.**-ին որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկեց արձանագրված անհամապատասխանությունը և նիստը շարունակվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Սահակյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Հ/Մ	Քանակ	Նախահաշվային գինը՝ ՀՀ դրամ	Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը	Մասնակիցների ընդհանուր գնային առաջարկ՝ ՀՀ դրամ		1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ
						Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	
1	Երիտասարդական հանրակացարանի ծառայություններ (հանրակացարանային բնակտարածքի վարձակալություն)	դրամ	1	16,200,000	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	13,500,000	16,200,000	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները, և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը՝ **17.04.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և **22.04.2019թ.**-ին ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5), գների նվազեցման նպատակով վերոնշյալ մասնակցի հետ վարել միաժամանակյա բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ձևով (**www.armeps.am** համակարգի միջոցով) ծանուցեց նշված մասնակցին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Նշված օրը և ժամին նախատեսված բանակցություններին մասնակիցը չներկայացավ և նրա ներկայացրած գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 23.04.2019թ.-ին, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվեց «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով (գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին) ներկայացնել որակավորման չափանիշներ հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ քան, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Տ. Հունանյան
Գնահատող	Վ. Իրիցյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան